ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտ 2003 թ. N 63

ք.Ստեփանակերտ

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք հանդիսացող արձանագրության կազմման կարգը հաստատելու մասին

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք հանդիսացող արձանագրության կազմման կարգը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կագին համապատասխան կազմված արձանագրությունը հիմք է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետի կասեցման համար:

3. Սույն որոշմամբ հաստատված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությանը համապատասխան իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2003 թվականի
մարտի 11-ի թիվ 63 որոշմամբ

ԿԱՐԳ

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք հանդիսացող արձանագրության կազմման

1. Սույն կարգով սահմանվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքները և կազմվող արձանագրության ձևը (կցվում է):
2. Սույն կարգով նախատեսված արձանագրությունը կազմվում է հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձի (անձանց) բացակայության դեպքում կամ երբ վերջիններիս այլ գործողությունների (անգործության) հետևանքով հարկային մարմինների կողմից ստուգման (կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման) փորձը ձախողվել է:
3. Սույն կարգով նախատեսված արձանագրությունը կազմում է հարկատուի մոտ ստուգում իրականացնելու (կամ այլ կերպ հարկային պարտավորությունները հաշվարկելու) լիազորություն ունեցող պաշտոնատար անձը՝ 2 ընթերակաների մասնակցությամբ:
4. Արձանագրության մեջ պարտադիր նշվում են՝
   - ✓ արձանագրությունը կազմելու վայրը, ամիս, ամսաթիվը և ժամանակը,
   - ✓ արձանագրությունը կազմող անձի անունը, ազգանունը, հայրանունը և զբաղեցրած պաշտոնը,
   - ✓ ընթերակաների անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, հեռախոսի համարը,
   - ✓ այն գործողությունները, որոնք պետք է իրականցներ հարկային մարմնի պաշտոնատար անձը, դրանց կատարման համար հիմք հանդիսացող իրավական ակտերը,
   - ✓ տեղեկություններ այն հարկատուի մասին, ում վերաբերյալ կազմվել է արձանագրությունը (անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, գտնվելու վայրը և այլն),
   - ✓ այն հանգամանքները և դրանց համապատասխան ձեռնարկված միջոցառումները, որոնց հետևանքով կազմվել է արձանագրությունը,
   - ✓ հղում այն իրավական ակտերին, որոնց հիման վրա կազմվում է արձանագրությունը,
   - ✓ արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի և ընթերակաների ստորագրությունները:
5. Սույն կարգով նախատեսված արձանագրությունը կազմելու պահից «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաղեմության ժամկետը համարվում է կասեցված:
6. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված կասեցման հիմքերի դադարեցումից հետո հարկային մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից նախատեսված գործողությունները կատարելու հետևանքով կազմված փաստաթղթերը հիմք են հանդիսանում «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաղեմության ժամկետը շարունակելու համար:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«_____» _____200 թ

_____

արձանագրությունը կազմելու վայրը

Ես _____

արձանագրությունը կազմողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը

մասնակցությամբ ընթերականեր. _____

անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը

_____

անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը

_____

անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը

համաձայն _____

համապատասխան նորմատիվ իրավական ակտը

_____

ժամը____ին ներկայացա_____

տնտեսվարող սուբյեկտի հասցեն և այլ տվյալներ

_____

նպատակ ունենալով իրականացնել _____

գործողությունների տեսակը

_____

տեղում պարզեցի, որ _____

առկա վիճակը և ձեռնարկված միջոցառումները

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

որի հետևանքով, ղեկավարվելով ԼՂՀ «Հարկերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով, կազմեցի սույն արձանագրությունը:

Սույն արձանագրության կազմման պահից ԼՂՀ «Հարկերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաղեմության ժամկետը համարվում է կասեցված:

Ընթերականեր. _____ _____

անուն, ազգանուն *ստորագրություն*

_____ _____

անուն, ազգանուն *ստորագրություն*

Արձանագրությունը

կազմեց. _____ _____

պաշտոնը, անունը, ազգանունը *ստորագրություն*